

Աստուծային լեռներուն

Պառնակոյտնե՛ր կապոյտ , սարե՛ր հերձաքարէ ու մարմարէ ,
Կրքանիտնե՛ր , սեպափունքնե՛ր որոնց ցորե՛նը եւ հաճարն
Հովը՝ Պեկլէն մինչեւ Նեթու՝ կը լսէ , կ'այրէ , կը գալարէ ,
Խորտըրտ կիրճե՛ր , լիճե՛ր , ստուերով ու բոյներով լի անտառներ ,

Խուկ անծաւնե՛ր , սեւ ձորակնե՛ր , ուր վաղեմի վտարանդիներն ,
Նախընտրելով զայդ քան կըքիլ ըստրկական կանւնին տակ ,
Բընակեցան արջին , գայլին , քարայծին հետ եւ արծիւին ,
Խորխորատնե՛ր ու հեղեղնե՛ր եւ անդունդներ , օրհնեալ ըլլաք :

Տաժանաշխատ բանտէն փախած եւ անողոք մունիկիպէն ,
Ձօնեց ըստրուկ Գեմինոսն այս փոքրիկ կոթո՛ղը՝ լեռներուն ,
Դաժանախորոխ ազատութեան նըւիրական պախակներուն :

Եւ այս յստակ կատարներուն վրայ ուր լռութիւնը կը ճրթուայ ,
Անպղծելի այս օդին մէջ՝ անծայրածիր եւ անապակ ,
Ես կը կարծեմ ազատ մարդու մ'արձակած ճի՛չը դեռ լսելի :

(Շարունակելի)

ԺՈՂԷ-ՄԱՐԻԱ ՏՀ ՀԵՐԵՏԻԱ

Թարգմ. Ա. Զ.



Ա դ ա Ն Ե գ ր ի

(Գննադատական փորձ)

1892-ին իտալական զմայելի գրականու-
թեան վրայ աւելցաւ « Ըսկատագիր » վերնա-
գրով քանաստեղծութեանց հատորը , որի ճակ-
տին կարդացաւ էր Ադա Նեգրի անունը :

Ո՛վ էր այդ աղջիկը եւ ի՞նչ էր իր երգը :
Բանուոր ընտանիքից ծնուած մէկ Իտալու-
հի , որի աղքատ հայրը վաղուց մեռել էր Մի-
լանի հիւանդանոցում. այսպիսով երկու տարե-
կան աղջիկը մնացել էր աշխատաւոր մօր խը-
նամբին : Բայց որովհետեւ ինչքան էլ չարքաշ
լինի մարդկային կեանքը՝ սահում է դարձեալ ,

ուստի մի օր որը աղջիկն արդէն մեծացած եւ
նախնական ուսումն էլ մի կերպ ստացած լինե-
լով , իբր վարժուհի քաշուում է Մոտտա-Վիս-
կոնտի աւանը որ գտնուում է Միլանից ոչ հե-
ռու , Լոմբարդիոյ արեւուտ դաշտերում :

Մոտտա-Վիսկոնտին մի յետ ընկած անկիւն
է , աղքատ ու կեղտոտ Բոբիկ ու յաղթանգամ
բնակչիներից այրերը կամ փայտահատ են կամ
թէ հողագործ . նրանց թուխ կանայքն էլ աշ-
խատում են մետաքսի գործարաններում եւ կամ
օգնում իրենց ամուսիններին . Իսկ փողոցները
մնում են բազմաթիւ , կիսամերկ ու չըմտիկ
երախաններին , թէեւ գիւղում մի-երկու դպրոց-
ներ էլ կան : Աւանն ունի երեք ճերմակ զան-
գակատներ , որոնք արեւից կարծր ներկում
են ամէն առաւօտ ու երեկոյ . չըմտկալում էլ
տարածուած են կանաչ արօսներ , ուր մեղմ օ-
բուրում են ուռենիների չաբքեր . մինչդեռ հե-
ռուից հանդարտ հոտում է Տեստին գետը՝ փայ-
լալով իր արմուկով ծանրացած :

Հէնց այս միանուագ ու քիչ էլ մեյամաղ-
ձոտ վայրերումն է, որ, չըրպապտուած սեւաչ-
եայ, փոքրիկ աշակերաններով, ապրել է Ագա
Նեգրին, ու իւր հագուսդէպ ազատ ժամերին
հիւսեղ մտայ երգերը :

Եթէ կ'ուզե՞ք, ձմեռնային երեկոներից մէ-
կում այցելելու նրա փոքրիկ սենեակը եւ գուրս
նայե՛նք պատուհանից .

Ձ Ի Դ Ի Ը

« Ճանապարհներին, դաշտերի վերայ
« Անձայն ու Ռեմեմե ձիւնի քուլաններ
« Յորձա՛ւ արտոյտ իջնում են վերէն :

« Ճերմակ Թերթիկներն անցուն երկնքում
« Պարում են կարծես ու զլւարճանում
« Եւ ապա յոգնած, ընկնում են երկիր :

« Ձիւնը տանկըում, Թէ՛ ծինու վերայ,
« Գերեզմանոցում եւ Թէ՛ պարտիզում
« Նիրհում է անշարժ, հազար ձիւ առած :

• Մի անխորտակիւն տիրում է չորսւկն .
« Խոր մուացումեան գրկում ընկղմած՝
« Լըռել է աշխարհն անտարբերութեամբ :

« Բայց այս անսահման հանգստի ժամին՝
« Սիրտըս, գտնելով իր յուշերը հին,
« Իր սէրը նիրհուն, խոկում է լրտիկ : »

Ձմեռնային օրերին յատուկ մեյամայ մրա-
փով ուրու ագծուած այս պատկերն արդէն ցոյց
է տալիս Թէ՛ նրա կեանքը, Թէ՛ չըրպապտը եւ
Թէ՛ հեղինակուհու նկարագրական նորոքը, որ
պարզ ու մեղծ գոյնիով կարողանում է ճշգիւ
արտագրել իրերը, Սակայն եւ այնպէս նա չէր
մտածում պէշըստիս լինել . դրա համար չու-
նէր նա հոգու զուարթութիւն բաւական չափով .
ո՛չ էլ Թախտալի Լէօպարտիի յախտեանական ու
անբացատրելի տրամութիւնը երգելու տե՛նչ կամ
ոյժ ունէր : Տառապող ժողովրդի ազլիկ, ժողո-
վրդի ներկայ տառապանքների երգչուհին էր
ուզում լինել նա . ահա նրա քնարի նիւթը .
այնպէս որ Ագա Նեգրին չի պատկանում այն
զտուած բանաստեղծների թափօրին, որոնք
կեանքի աղմկից հեռու՝ այնպիսի պատկերներ են

որոնում, ուր՝ անհատն ու ժամանակը համար-
եա ջնջուելով՝ սպիտակ արձանների նման հան-
դէս են քայլես հանրամարդկային իդէալներ՝ ա-
նարատ ու անմահ . ո՛չ, Ագա Նեգրիի ոտանա-
ւորները միւր ժամանակակից ընկերական կեանքի
հետ սերտ կապուած են . ու զ . ւ՛մ եւ՛մ ստել : Թէ՛
բանուորական գտար պաշտպանող ընկերական-
կան մի ազդու եւ ջղային պոէմա է նրա « Ճա-
կատագիրը », որի մէջ բանաստեղծուհին ամ-
բողջ հոգով առում է բուրժուազիան, մարա-
կում նրա մոլութիւնները, եւ, ընդհակառակն
արդահանում է ու ժառապաւ բանուորներին, փա-
ռաբանում է նրանց տենչերը :

Այսպիսով, նրա համար, կարծես, միայն
երկու դասակարգերից է բաղկացած ժամանա-
կակից հասարակութիւնը՝ բուրժուազիա եւ բա-
նուորութիւն . առաջինը փշաղած, անհոգ ու
ատելի . իսկ երկրորդը՝ տանջուած ու լիբերի .
Թէ՛ նա որչափ իրաւացի է ժողովրդի ստու-
րին դասակարգը պաշտպանելու, իբր աշխատա-
սիրութեան ու առաքինութեան տիպաներ, իսկ
զրա փոխարէն ձաղկելու ունեւորներին, իբր
բողորմիկն ագահ ու փշացած տարր, այդ մա-
սին չեմ ուզում երկար կանգ առնել այստեղ .
միայն Թէ՛, բարի կը լինի բանաստեղծուհին
ներելու ինձ, եթէ նկատեմ, որ աշխարհում չի
կայ ո ո եւ չ աղ, որի մէջ կարելի լինի ցոյց
տալ երկու այդպիսի ծայրայեղութիւններ, այ-
սինքն՝ բանուորութիւնը լինի ամբողջապէս ա-
ռաքինի, իսկ բուրժուազիան՝ ամբողջապէս
փշացած : Այդ երկու տարրերը եթէ տարբեր են
իրարուց խաղկների ծանրութեամբ, վարք ու
բարքով եւ նոյնչափ մեծ չէ նրանց մէջ եղած
զանազանութիւնը. եւ գա հասկանալի է, քանի
որ եթէ մի կողմից հարստութիւնը նպաստում
է բարեկրի ապականման, միւս կողմից էլ մոռ-
նալու չէ որ կարգը, թշուառութիւնը եւս,
եթէ ոչ աւելի, գոնէ նոյն չափով մղում է շատ
անմեղ էակներ դէպ ի բարոյական անկումն :
Վերջապէս այդ երկու գոտակարգերն իրար հետ
մշտական չմտնում մէջ լինելով, միմեջ աւելի
քնական եւ պարզ չէ՞ որ բարոյական գծերով
իրար նման լինէին մեծ մասամբ :

Ես աւելորդ եմ համարում Ագա Նեգրիի
հատորից Թարգմանել այստեղ օրինակներ, որոնք
բուրժուազիային են ուղղուած . ո՛չ միայն որով-

հետեւ դրանք լի են սնվայել հայտնաբերումով . այլ եւ որովհետեւ դրանք կազմում են իւր ամանանյալով ոտանաւորները : Գծութիւնն ու պարկեշտութիւնը շատ աւելի գեղեցիկ բանաստեղծութիւններն են ներշնչել նրան քան թէ կիրճն ու ատելութիւնը :

Հէնց որ միանգամ նախագծեց իւր երգերի այս ընդհանուր ծրագիրը, այնուհետեւ նրան կը մնար այդ ծրագիրն ու ժեղ կերպով իրագործող նիւթեր գտնել : Սակայն, ինչպէս տեսնում ենք, այդ ծրագիրն աւելի յարմար է վէպի , քան թէ հատուկատոր բանաստեղծութիւնների . ուստի եւ նրա « Ծակատաքիլը » շատ աւելի նման է վէպի , քան թէ անկախ ոտանաւորներից բաղկացած հատորի :

Իրօք, ինչ կարող է պարունակել մի վէպ, որի նիւթը քաղուած է գործաւորների կեանքից , նախ՝ որով միջավայր , ապա դէպքեր ու հերոսներ, ու վերջապէս այդ բոլորի ներգաշնակ համախմբութիւնից ծնւում է մի ընդհանուր եղբայրացութիւն :

Երբեք դժուար չէ այդ բոլոր պատմողական տարրերը լրիւ գտնել այս հատորի մէջ : Այսպէս՝ Արա Նեգրին միջավայր է ընտրել բանուորական թաղերը , ուր ապրում են չարքաշ սերունդներ, որոնցից մեր բանաստեղծուհին կը ջոկէ իր հերոսները : Անա այնտեղ ծխացող գործարանը . ներս մտնենք .

« Պըտոյտ են գալիս կաշուէ լարերը ,
« ձըռնչում նաեւ մեքենաները ,
« Մինչդեռ բանուորներն ժիր գործի կեցած ,
« երգում են ուրախ՝ գըլուխները բաց :

« Բայց յանկարծ լսուեց մէկ ափաբեկ գիչ :
« Կարծես անտառում խոր վէրք բստացած
« երէի ցաւոտ կաղկանձը լինէր :

« Սուր ժանիքներում անիւներն առան
« Ու տարան մի ձեռք , ճգմելով իսպառ .
« Եէկ ու Թշուառ կիյն , զրկուեցար ձեռքիցդ :

« Պըտոյտ են գալիս կաշուէ լարերը ,
« ձըռնչում նաեւ մեքենաները ,
« Բայց բանուորների ծանծոր ձայները
« էլ երգ չեն ասում :

« Քրտինք ու արցունք խոր խառնուած ,

« Նրբանց ճակատից հոսում են կամ-կամ ,
« Այն ինչ մեծ անիւն խուլ պըտոյտներով
« Պատմում է տըխուր մէկ աւանդավէպ :

« Եւ տեսնում են միշտ իրենց պղտորուած
« Աչքերի առաջ ձեռքը ձըգմըւած .
« Եէկ ու Թշուառ կիյն , զրկուեցար ձեռքիցդ :

Շարունակենք մեր վէպը, բանալով մի այլ գլուխ . Թաղի ծայրին կանգնած է հին եկեղեցին , ուր յոգնած , վշտաբեռ ու անտիրական ծերունին աղօթում է . մինչդեռ փողոցում կառուցուող տան կտուրից ներքեւ է ընկել մի բանուոր եւ մտել . կարգաւք նրա յուզարկաւորութիւնը .

« Դէմքերը խոժոռ ու եղբրական
« Անցնում են խմբով , գըլուխները բաց ,
« Իսկ ննչեցեալի դագաղը տըխուր
« Պատել են ծրփուն ու սեւ քօղերով :

« Նըրա՛յց ճակատին երկու կնճուի մէջ
« Մըտախոյ մէկ վիշտ ակօս է դըբել .
« Ի՞ զուր է վերէն երկինքը ծպտում ,
« Առանց սըբելու հոսող արցունքներն
« Լալիս են լըռիկ :

« Իրարու գամուած տախտակների մէջ
« Պառկած է մեռեալն իսպառ քախշախուած .
« Սշխատում էր նա տանիքի ծայրին ,
« Ու ընկաւ փողոց քարերի վըրայ

« Դըլուխը փշրեց :
« Մի տիտան էր նա , գեղեցիկ , հիւսկիւ ,
« Սակայն ընկաւ նա . եւ ձեռքը մահուան
« ծուրտ ու խորշմած սեղմում է արդէն
« Միւտը իր կընոջ , այրի , ուժասպառ :

« Եւ ափա նըրան տանում են քընի
« Ու մոռացումեան խշտակում դըրած ,
« Եւ մի Աստուծոյ ձեռքին տակ ափեղ ,
« Դէմքերը խոժոռ անցնում են խմբով
« Ու եղբրական :

« Խորհում են նըրանք , ո՞ի , ճակատաքիլ ,
« Նըրա պէս գուցէ մեռնին եւ իրենք ,
« Ձինուոր է բանուոր , այդ գիտեն արդէն .
« Լցում են սըտերն , ափա գունատուում
« Դէմքերը նըրանց :
« Հերկուի նըման ուժեղ են իրենք ,
« Իսկ մի անգամ անգամ ու մըտմըտալով

« երազ են շոյում — մի սիրուն տընակ
 « եւ մի ընտանիք . . . բայց վաղը գուցէ
 « Հէնց աշխատանքի դաշտերում ընկնին :
 « Մի տան կըտուրի՞ց . . . կամ գործարանի
 « ժընտրի միջի՞ն . . . գուցէ խորտակուող
 « կամարք՝ մը տա՛կ . . . սակայն մեռնողի
 « Ձայնը չէ լսում, չին գընախառնում
 « Ջոնը գերագոյն :
 « Ընկնողների տեղ ողջերն են գալիս ,
 « եւ սուգի վերայ յոյսն է բարձրանում .
 « Անթիւ են զօրքերն , ու կոխտուելով
 « Յաղթընածներին՝ յառաջ են գընում :

« եւ ինչպէս տըղայքն ուրախ , ցամակաւուն՝
 « Վազում են անա գերեզմաններ ի
 « Համբ հողի վերայ , այդպէս եւ անհոգ
 « Ու տըղկալի ամբոխն է անցնում
 « Ընկած զոհերի վերայ կոխելով : »

*Եւ ի հարկէ իրար լրացնող այս ոտանաւոր-
 ներից կազմուած վէպն աւելի կը մայլուի ,
 եթէ մտածենք նաեւ որ Թշուառ զոհերն իրան-
 ցից յետոյ փողոցներում անաէր որբեր են թող-
 նում , որոնցից կազմուած է Թափառաշրջիկների
 եւ չարագործների թափոր :*

ՇՐՋՄՈՒԿԻ ՏՂԱՆ

« Երբ տեսնում եմ ես , որ կըողտու , սիրուն
 « Թափառում է նա ցեխոտ փողոցում ,
 « Ցնցողի դարձած ժաքէթը հագին ,
 « Կշիկը ծակած , դէմքը քրմափառ .

« Երբ տեսնում եմ ես , որ ճին շաւարով
 « Կանգնած է դրսում , սայլերի միջեւ
 « Ու քար է նետում անցնող շըներին ,
 « Թէ գող է արդէն . լկտի , սըրկալ .

« Երբ տեսնում եմ ես , որ ճիծաղելով
 « Ցատկառում է նա , ո՞հ , մացառներում
 « Բացուած խեղճ ծաղիկ , եւ խորհում եմ Թէ՝
 « Աշխատանքումն է մայրը բանում ,
 « Թէ խուցը դատարկ , իսկ հայրը բանտում ,

« Իսկոյն մի խոր վիշտ ցնշում է հոգիս ,
 « եւ ասում եմ դու . — Ի՞նչ վրջ կ'ունենաս ,
 « Շըջովիկ տղայ , արգէտ , ցնցողուն ,
 « Դու որ աշխարհում անտէր ես անտուն :

« Աղքատ իրճիթի ուրախ երգեցիկ ,
 « Ի՞նչ ես լինելու քըսան տարիքիդ .
 « Մի խարդախ ըստո՞ր , Թէ՛ կայտառ բանու որ ,
 « Կամ գուցէ դառնաս գրպաններ կտոր՞դ :

« Արդեօք կը հագնիս արեխտաւորի
 « Համեստ վերնազգե՞ստ , Թէ՛ թիպալարտի
 « Անպատիւ հագուստ . աշխատանքո՞ւմ ,
 « Հիւանդանոցո՞ւմ , Թէ՛ բանտում կընիս :

« Ո՛րչափ կ'ուզէի ճէնց իջնել փողոց ,
 « Վշտի , գըթուծեան եւ հոգեւարքի
 « Յուրը ու գերագոյն գրկախառնութեամբ
 « Սեղմելու նըրան իմ կրճիխ վէ՛րայ :

« Բոլոր համոյրներս կ'ուզէի մէկից
 « Դընել շըթունքին , դընել իր կրճքին ,
 « եւ եղբայրական սուրբ սիրով ցուած
 « Կ'ուզէի մնել խեղդուկ հծծիւնով —

« եւ էլ եմ ապրել սուգով , տանջանքով ,
 « եւ էլ մացառի ծաղիկ եմ Թշուառ ,
 « Իմ մայրը նոյնպէս աշխատանքում .
 « եւ վիշտ եմ տեսել , ես սիրում եմ քեզ : »

*Թող ներուի ինձ ասել , որ եթէ Ազա Նեգ-
 րին ուրիշ ոչինչ էլ գրած չը լինէր իր հատու-
 րում , արդէն ցարդ յիշատակուած այս երեք
 կամ չորս ոտանաւորներն ինքնին հերիք էին ,
 որ մի սիրուն ամբողջութիւն համարէինք « Ճա-
 կատագիրը » , որ պարունակում է իրար հետ
 սերտ կերպով շղթայուած այս ներուները . դը-
 րանց ընթերցումը շատ ծանրակշիռ ու տխուր
 հարցեր է ծագեցնում ընթերցողի մաքում . Ա-
 մէն մարդ պարզ կ'ըրպով ըմբռնում է հեղինա-
 կուհու պաղտամբ , թէ բարեխաւու , ապահո-
 վելու է թշուառ գործաւորների չարքաշ ու
 արկածալի վիճակը , դա ոչ միայն մէկ աղբրս
 է , այլ նաեւ արդար պահանջ :*

*Իսկ շեշտի եւ արտայայտութեան տեսա-
 կէտից , հէնց նաեւ շըմովիկ տղուն նուիրուած
 այս վերջին բանաստեղծութիւնն իսկ բաւ էր ,
 որ Ազա Նեգրին ընկերվարական շարժալի երգ-
 չուհի համարուէր . եւ ես չը գիտեմ , թէ ի՞նչ
 աւելի կըթիչ եւ ազգու ոտանաւոր կարելի է
 անգիր սովորեցնել աշխատաւորների երեխանե-
 րին , քան թէ այս փոքրիկ գլուխ-գործոցներն*

ենի ծա տեսել եմ սպանական շրջմիլի մանուկները նկարող Մուրլիջի անմահ գործերը . հիացքով կարդացել եմ Սերվանտեսի հակերճ պատմութեանը, որոնց մէջ Դոն-Քիշոտի հրակայ հերոսական անպակաս վառ ու լայն վրձինով նկարագրել է նմանօրինակ տիպարներ. կարդացել եմ նաեւ Մաքսիմ Գորկիի այդ շարքի վեպակները . բայց, ըստ իս, Ադա Նեգրիի ոտանաւորները, այդ բոլորի էութիւնը պարունակելով հանդերձ, ունին մի շատ աւելի խոր սարուռւ . կարծես թէ, երբ բանաստեղծունին իր տիպի պատմանին զիտում էր այդ թափառական մանկան, իբր արուում կուանքի պատմութիւնն այդ անտիրական էակի մէջ տեսնելուց զատ՝ ցնցուել է նաեւ տիեզերական ամենազանգամ օրէնքներից մէկի թրթրոով . ուզում եմ ասել, թէ աղջիկների եւ կանանց քնազգական խաղափութեանից, անգիտակից տեսչանքներից մէկն էլ հենց այն է, որ փոքրեքին, խոնարհներին, վշտաւորներին կարեկցին . մայր եւ սիրող դառնալու մի անբացատրելի հով է դա, հրեշտակային սիրող մի ծարաւ, ու անպէս վշտեմ, որ զրան չի կարող հաւասարել այլ մարդու ամենաբարձր յատկանիշն անգամ, լինի նոյն իսկ պատկարզ մի դաշտում, զէնքը ձեռքին հպարտ մտնելը . քանի որ եթէ վերջին ղէպքում հերոսի վիհանձն քաջութիւնն է որ փայլում է, առաջին ղէպքումն էլ զթութիւնն է որ ճառագայթում է կանանց ճակատը :

« Ծակատագիրը » լի է նմանօրինակ բանաստեղծութիւններով, որոնց ընթերցումը մի այսպիսի տպաւորութիւն է թողնում իմ վրայ . կարծես, ինքը հեղինակունին արտում, հերարձակ բայց եւ անվատ կանգնած է մի բարձր սալի վերայ, աշխատանքի խորհրդանշանն է դա, եւ մութնը ձեռքին չափ է առլին չորսդէն խոնուած ստուար ու մռայլ ամբիսի երգին . ամէն կողմից զգրգում են ծանրաշարժ մեքենաները, ծխնելոյզներից բարձրանում է սեւ մուխը, բովերն էլ ճարճաւում են կարմրաքոյ . այնտեղ լսւում են այրիների հեծկլտոցները, որբերի վայնասունները, ծերունիների հառաչանքները . եւ ահա այդ արտաճմիլի համերգի միջից, տեսք, յուսահատութեան նոթն ի՜նչ վշտաւոր է հնչում անգործ, ուժասպառ գործաւորների սեւ շարքերից :

« . . . Գալիս ենք մենք այն տղաներից ,
« Ուր հուր չի կայ ,
« Խշտեակներից , ուր քուն չի կայ .
« Գալիս ենք մենք մութ ուղեքից
« Ու աշխարհի վերայ ծրգում
« Մի մեծ բտուտեք
« Վրտանգների եւ սուգերի :
« Որոնեցինք սուրբ իդէալ .
« Սակայն նա մեզ դաւաճանեց .
« Որոնեցինք վերածննդ
« Ու կազդուրիչ աշխատութիւն ,
« Սակայն նա մեզ հեռու մղեց :
« Յոյսն ո՛ւր մընաց , ոյ՜ն ո՛ւր մընաց .
« Ինչո՞ւ արդեք կոյր բաղդը մեզ
« Կանչում է միշտ - « Ի դ՛ուր , Ի դ՛ուր » .
« Ո՛հ, զբնութիւն, յաղթուածներ ենք : »

Արդեօք գծագրութեամբ միեւնոյն հարցին անպէս կորովի կերպով շօշափող Ստեյնեն անգամ չէ՞ր ծափահարելու սով բուրդ այս էջը գրող աղջկայ տաղանդը :

Շտապեմ աւելցնելու նաեւ այն, թէ բանաստեղծունին այնչափ է տարուած ներթերի այդ շարքով, որ նա քնութեան զեղեցիկութեան վրայ ոչ մի լուրջ ուշադրութիւն չէ դարձրել . ուստի եւ ընտրութեան առարկայական տեսարանները չեն կարողացել պայծառ հանդարտութեամբ անդրադառնալ նրա հոգւ մէջ, իսկապէս, բնութեան հրապոյրն ըմբռնելու, ճաշակելու համար ոչ միայն խոր լրացմունք, բանաստեղծական ձիքը ունենալու է, այլ եւ ընդ թէ շատ բուզգայական լինելու է, այսինքն՝ գոնէ մասամբ ոչնչացնելու է մեզ խանգարող երկրային հոգեւն ու կրքերը, որպէս զի կարողանանք ինքնամոռաց հոգեզմայլանքով պարզօրէն թափանցել բնութեան վեճափառ զեղեցիկութիւնը . այս ճանապարհով են քայլել Գէօթէն էլ, Ֆլոբերն էլ, Լըքոնդ-դը-Լիլն էլ :

Չը մոռնանք ասել նաեւ այն, թէ Ադա Նեգրին սեր եւս երգել է նա թէեւ ջղային ու փոթորկոտ մի քանի երգեր հիսու է այդ անթառամ արմաւենու ճեւղերից, սակայն դրանք եւս մի առանձին ուշադրութիւն չեն գրաւում . հետաքրքրիչ է սակայն իւր արտիքը ներկայացնել, որ եթէ մէկն ուզէր պատկերացնել նրա երազած երիտասարդին, պէտք է երեւակայէր ժողովրդից սիրած մի առողջ տղամարդ, որի

հուժկու մկանունքներն աշխատանքի մէջ են զարգացել, որի ճակատը քրտնած է դարձնողի բոցերից եւ որը միաժամանակ վիշտ է տեսել աշխարհում :

Այս բոլորով հանդերձ թո՛ղ ոչ ոք չ'ենթադրէ, թէ Ազա Նեգրին յոռտես է . ընդհակառակը . եւ զա հասկանալի է , քանի որ ընկերավարականութեան քարոզիչները յոռտեսներ չ'են . չէ՞ որ յոռտեսութեան սահմանում ո՛չ մի պայծառ երազ չի ծաղկում . ներկայ հասարակական պայմանները լաւագոյն դարձնելու հաւան է որ ողբերորում է ընկերավարականութեան քարոզիչներին : Այնպէս որ երբեք զարմանալու չէ որ Ազա Նեգրիի մոայլ ոտանաւորների մէջ դէս ու դէն , փայլփլուն աստղերի պէս , հանդէս են գալիս բանաստեղծութիւններ , որոնց մէջ նա երազում է մարդկութեան երջանիկ ապագան , երբ կը դադարին պատերազմի աղէտները , եւ ըստ որ ազգերը համերայնօրէն կը գործեն աշխատութեան եւ խաղաղութեան արագան զրօշակի տակ . այդ օրը կը հնչէ բանւորների երջանկութեան կոչնակը , թէ՛ « Այստե՛ստե՛ս . ամէն մարդու հայրենիքն է ամբողջ աշխարհը » :

Ես այլ եւս չեմ ուզում շարունակել , որովհետեւ կարծում եմ թէ այսքան տերեւներն իսկ բաւ են արդէն մի պսակ հիւսելու Ազա Նեգրիի ճակտին :

Փառիզ

Մ. ՄԱՏԷՆՃԵԱՆ



Տ Ո Ւ Ն Կ Ե Ր Ո Ւ ՀԱՅԵՐԷՈՒ ԱՆՈՒՆՆԵՐԸ

DE QUELQUES NOMS ARMÉNIENS
DE PLANTES

Par le Dr. Joh. ARTICHA

Նարկիզ , narcisse . — Ուիդիոս (Ovide, Métamorphoses III. 5 et 6) կը պատմէ թէ , Կեփիս գետին (Աթէնքի մօտ) եւ Լիբիոպա յաւերժա-հարսին որդին , Նարկիզ , չքնադազեղ պատանի

մըն էր . ամենքն իրեն զարնուած էին , եւ արհամարհանքով կը մերժէր բոլորին սէրը . Արձազանք



Նարկիզ :—Narcissus poeticus L.

յաւէրժաւարը , անոր սէրէն սրտաբեկ ու վըշտահար , հալ ու մաշ եղած՝ ձայնը միայն մնաց , եւ իր կմխքն՝ իրբեւ ժայռ . Օր մը Նարկիզ որսէ դարձին հանգչեցաւ . վճիտ աղբիւրի մը եզրը եւ հոն ջրին կոհակներուն մէջ տնանլով իր աննման երեսը , սիրահարեցաւ իր ստուերին ու այլ եւս չկրցաւ անիկ զատուիլ . անկարող տիրանալու իր սիրոյ առարկային , ինքզինքը ըսպաննեց . մեռած՝ կ'ըսէ առասպելը , կը նայէր միշտ Ստիլքսի յաւիտենական ջրերուն մէջ , Դիք գիւնը փոխեցին ծաղկին՝ որու պատկերը , կ'ըսէ Ուիդիոս , զարնան կր ցոլանայ ջուրին մէջ եւ յետոյ կը թառամի ու կը մեռնի :

Հիւրմիւզան իր Վրոյրի Բուրասանաց մէջ կ'երգէ այս բանաստեղծական Նարգիսը .

Ամբրտովլաթ եւս կը նկարագրէ Նարձիսը « մէջը դեղին , դուրսն սպիտակ » . այս բոլոր նկարագրութիւնները կը պատշաճին Լիննէի narcissus poeticus L.ին (նարկիզ պուճանեղու) որ միարթեակ տունկ է անարխիլաներու (չգիտամ(1)) տունկէն վեց սպիտակ թերթերով որոնց

(1) Գրոցողներ amaryllis ճանչցան մեր երկրի չիլեմալը եւ ոչ թէ , ինչպէս կը կարծէ Տ. Նորայր Բիզանդացի , hemerocallis , ղեղին օռւեամ (վանեցուց զամպիլ բաժնը արգեթ) : Ձգրտանն (amaryllis) ունի սոխարմատ (bulbe) , hemerocallis ունի ուռած տարերկրայն ցօղուններ (rhizomes tubéreux) :